



ՄԱՆԿԱԴԱՏԱՆԵԿԱՆ ՀՈՐԻՉՈՆ

ՅԱԽԵԼՈՒԱԾ «ՀՈՐԻՉՈՆ» ՇԱԲԱԹԱԹԵՐԹԻ

Սեպտեմբեր 2023

ՄԵՐ ԽՕՍՔԸ



Սիրելի աշակերտներ,

Սեպտեմբեր ամսուն դպրոցները կը բանան իրենց դռները, աշակերտներն ու ուսուցիչները կը պատրաստուին վերամուտին, իսկ ծնողները կը փորձեն ապահովել իրենց զաւակներուն դպրոցական պիտոյքները: Ուրախ մթնոլորտ կը տիրէ վերամուտին դպրոցներէն ներս: Երկար արձակուրդէ ետք աշակերտները կրկին կը հանդիպին ու կը սկսին պատմել ամառնային իրենց անհատում պատմութիւններուն ու արկածախնդրութիւններուն մասին:

Շուտով կը սկսին դասաւանդութիւնները: Հետեւաբար թելադրելի է, որ տարուան սկիզբէն լաւապէս հետեւինք մեր դասերուն, կեդրոնանանք դասարանէն ներս եւ ուշի ուշով հետեւինք մեր ուսուցիչներու բացատրութիւններուն, որպէսզի դասերը հեզասահ ընթանան, եւ մենք կարենանք լաւագոյն արդիւնքներով աւարտել տարին:

«Հորիզոն» Մանկապատանեկանի անձնակազմը ձեր բոլորին բարի վերամուտ եւ յաջողութիւն կը մաղթէ: Յիշեցնենք նաեւ, որ Սեպտեմբերին կը նշենք Հայաստանի 2-րդ անկախութեան տօնը, որ տեղի ունեցաւ 21 Սեպտեմբեր 1991-ին, երբ Խորհրդային Միութիւնը կազմալուծուեցաւ:

2020 թուականին, այս ամսուն նաեւ սկիզբ առաւ Արցախի 44-օրեայ պատերազմը, երբ Սեպտեմբեր 27-ին Ատրաբեյի յարձակեցաւ Արցախի վրայ: Մեր հայկական բանակի զինուորները, կամաւորական զունդերը եւ Արցախի ու Հայաստանի քաջ ժողովուրդը հերոսաբար կռուեցան թշնամիին դէմ: Պատերազմը տեւեց 44 օր եւ հրադադար տեղի ունեցաւ նոյեմբեր 9-ին ստորագրուած ցաւալի պայմանագրով:

Ճիշդ է, որ մենք տուինք շատ զոհեր, մեր հողերէն մաս մը կորսնցուցինք, բայց մենք երբեք չենք վիատիր, մեր յոյսերը երբեք չենք կտրել եւ կը շարունակենք պայքարը, մինչեւ որ տիրանանք մեր ամբողջական հայրենիքին:

ՃԱՆՉՆԱՆՔ ՅԱՆՈՒՆ ՀԱՅՐԵՆԻՔԻ ԱԶԱՏՈՒԹԵԱՆ ՀՈՒՆՈՒՄԸ ՄԵՐ ՆԱՀԱՏԱԿՆԵՐԸ ՅԱՐՈՒԹ ԲԱՆՈՅԵԱՆ

Արցախեան նորագոյն պատերազմի նահատակ Յարութ Բանոյեան ծնած է Հալէպ, 1976-ին: Կրթութիւնը ստացած է Քարէն Եփփէ Ազգային Ճեմարանին մէջ: Փոքր տարիքէն անդամակցած է ՀՄԸՄ-ին: Եղած է գայլիկ՝ ստանալով Վարիչ վեցեակապետի աստիճան, ապա սկսուտ՝ հասնելով մինչեւ Առաջնորդի աստիճանին:

Յարութ յատկանշուած է իր լրջութեամբ, ճշդապահութեամբ, կարգապահութեամբ, յարգանքով եւ պարտականութեան գիտակցութեամբ եւ մաս կազմած է ՀՅԴ-ի շարքերուն:

Սուրիոյ պատերազմին կը հանդիսանայ Հալէպի հայաշատ թաղամասերու ինքնապաշտպանութեան ղեկավարն ու հրամանատարը: 21 Սեպտեմբեր 2019-ին, Հայաստանի վերանկախութեան տօնին առիթով, հայրենիք-սփիւռք կապերու ամրապնդման ի խնդիր իր ազգանուէր գործունէութեան համար, հրամանագիրով մը Հայաստանի նախագահ Արմէն Սարգսեան զինք կը պարգեատրէ «Հայրենիքին մատուցած ծառայութիւններու երկրորդ աստիճանի մետալ»ով:

Իր երդումին հաւատարիմ, քաջարի հրամանատարը Արցախեան պատերազմէն օրեր ետք իր խումբով կը հասնի կռուի դաշտ՝ ամբողջ հայութեան սպառնացող վտանգը կասեցնելու համար: Ռազմական իր փայլուն կարողութիւններով, ան քաջաբար կը յաջողի ետ մղել թշնամին բազմաթիւ անգամներ:

Յարութ կը զոհուի Շուշիի ինքնապաշտպանութեան ժամանակ, անհաւասար կռուի մէջ, դժուար ու ծանր օրերու ընթացքին, 5 Նոյեմբեր 2020-ին: Հայրենի հողը զինք կը գրկէ Եռաբլուրի նահատակաց պանթէոնին մէջ, 19 Նոյեմբեր 2020-ին: Նահատակուելէն ետք, հայրենի պետութիւնը զինք կը պարգեատրէ Հայաստանի Հանրապետութեան «Մարտական խաչ» առաջին աստիճանի մետալով:

Իր նշանաւոր խօսքն է. «Այս հայրենիքը մեզ համար կամ մեր գերեզմանն է, կամ թշնամու գերեզմանն է»



ՅԱՐՈՒԹ ԲԱՆՈՅԵԱՆԻՆ

Խօսք եւ երաժշտութիւն՝ Մուրատ Մշեցիի



Հայրենիքի կանչն է բերել
Հեռուներից քեզ ընկեր,
Նուիրական վառ երազով
Դու տուեցիր հողիդ սէր
Քո հոգին լուռ տառապել է
Տէր Զօրի տաք աագին,
Ու վրէժը արին դարձած
Ուժ է տուել քո բազկին:

Կրկներգ
Դու ոգեղէն անպարտ հսկայ,
Դու նահապետ Հայկի գարմ,
Ամէնուր ես ու միշտ ներկայ,
Դու ոսխին անանձ վարմ,
Դեռ կը բացուի հայի օրը,
Կը հագնի դաշտը գմրովստ,
Երկինքներից մեզ կը հսկես
Արծուասիրտ քաջ Յարութ:

Քո քարակերտ կամքով անպարտ
Դու պատմութիւն կոեցիր,
Հազարավէրք մեր լեռներին
Քո անունը գրեցիր
Նահատակաց հրամանով:




Հայրենի երգիչ Արաթօ Իսպիրեան Յարութին նուիրուած այս երգը հրապարակեց 2022-ին:



<https://www.youtube.com/watch?v=TYctuvHTMVM>



Ո՛Ր ՃԱՄԲՈՎ ՄԵՂՈՒՆ ԿՐՆԱՅ ՀԱՍՆԻԼ ԾԱՂԻԿՆԵՐՈՒՆ:



ԿՐՆԱ՛Ս ԳՏՆԵԼ 2 ՊԱՏԿԵՐՆԵՐՈՒՆ ՄԻՋԵԻ ԳՈՅՈՒԹԻՒՆ ՈՒՆԵՑՈՂ 10 ՏԱՐԲԵՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ:



ՏԱԹԵԻ ՎԱՆՔ



Հայ միջնադարեան ճարտարապետութեան նշանաւոր յուշարձաններէն մէկն է Տաթեի վանքը, որ կը գտնուի Հայաստանի Հանրապետութեան Սիւնիքի մարզէն ներս, Տաթեի գիւղին մօտ: Վանքը կարելի էր կը խաղայ, դառնալով քաղաքական, կրօնական եւ մշակութային կեդրոն:

ԺԴ. եւ ԺԵ. դարերուն Տաթեի մէջ կը գործէ հայկական կարելորագոյն համալսարաններէն մին:



Ըստ ասանդութեան, վանքը կառուցող ճարտարապետը, երբ կ'աւարտէ վանքին շինութիւնը, հիացած կը դիտէ զայն, ապա աչքերը երկինք բարձրացնելով, գոհաբանութիւն կը յայտնէ Աստուծոյ եւ կը ցանկայ թելեր ունենալ ու թռչիլ վանքին գմբէթէն դէպի վեր, ապա կ'ըսէ. «Հոգին Սուրբ տայ թել»: Նոյնպէս՝ ըստ ասանդութեան, Աստուած թելեր կը պարգեւէ ճարտարապետին, եւ ան կը թռի ու կ'անհետանայ մարդոց աչքերէն: Այսպիսով վանքը կը կոչուի Տաթեի վանք:

Վանքին մէջ տեղադրուած է 9 մետր բարձրութեամբ սիւն-գաւազան մը: Այս գաւազանը կը ճօճուի-կը ճօճուի, բայց չի տապալիր, ինչ որ կը խորհրդանշէ հայ ազգին աննկուն կամքը:



ՍՈՒՐԲ ԽԱՉԻ ՏՕՆ

Հայ Առաքելական եկեղեցին կը նշէ Խաչվերացի տօնը, որ Սուրբ Խաչի գլխաւոր տօնն է եւ եկեղեցիի 5 տաղաւարներէն մէկը:

Խաչվերաց կը նշանակէ խաչը վեր բարձրացնել:


610 թուականին պարսիկներու Խոսրով թագաւորը կը գրաւէ Երուսաղէմը: Կ'աւերէ եւ կը կողոպտէ քաղաքը, իր հետ տանելով Սուրբ Յարութեան տաճարի պահուած Քրիստոսի խաչափայտը:

Հռոմէացի Հերակլ կայսրը, որ աստուածապաշտ էր եւ քրիստնեասէր, չ'ուզեր որ գերի իյնայ խաչափայտը: Ան 14 սեպտեմբեր 627 թուականին սրբազան պատերազմ կը յայտարարէ Խոսրով թագաւորի դէմ:

Հերակլ կայսրի զօրքը կ'անցնի Հայաստանէն: Անոր մեծապէս կ'օգնեն հայ իշխանները եւ մանաւանդ Սիւնիքի Բիրեղ իշխանուհին: Հերակլ կայսրի զօրքին կը միանան հայ զինուորներ: Երբ Հերակլը կը յաղթէ թշնամիին, որպէս շնորհակալութիւն Սիւնիքի Բիրեղ իշխանուհին կու տայ Քրիստոսի խաչափայտէն մասունք մը:

Յաղթական կայսրը զինք դիտող ժողովուրդին դիմաց, խաչափայտը վեր կը բարձրացնէ եւ զայն Երուսաղէմի Սուրբ Յարութեան տաճար կը վերադարձնէ:

Այդ օրուրնէ սկսեալ քրիստոնեաներ կը տօնեն Սուրբ Խաչվերաց կամ Սուրբ Խաչի տօնը:



Խաչվերացի տօնին մասին կարելի է դիտել մօտ 3 վայրկեան տեսող տեսերիզ մը Google-ի էջին գրելով **Շողան խաչվերաց** բառերը:

ԻՆՉՈՒ ԿԱՐԵՒՈՐ Է ՋՈՒՐ ԽՄԵԼԸ

Չափազանց կարեւոր է ջուր խմելը, որովհետեւ ջուրը՝

1.- Մարմինը կը մաքրէ ատելորդ նիւթերէ:

2.- Կը կարգաւորէ մարմինին ջերմաստիճանը:

3.- Կը բարելաւէ ուղեղին գործընթացը:

Ըստ ուսումնասիրութիւններու, տղաքը կարիք ունին օրական 3,6 լիթր ջուրի, իսկ աղջիկները՝ 2,6 լիթրի:

Ջուրը շատ կարեւոր է մեր մարմնի բոլոր գործարաններուն եւ մեր առողջութեան համար: Այն անձերը, որոնք չեն սիրեր ջուր խմել կամ յաճախ կը մոռնան խմել, կրնան հետեւեալ քայլերուն դիմել.

1.- Թեթեւ համ կրնան տալ ջուրին անոր ատեցնելով կիտրոն, ելակ կամ անանուխ:

2.- Մշտապէս իրենց հետ ունենան ջուրի շիշեր, մանաւանդ մարզանքի ընթացքին:



ՎԱԳԵՐԱԶԻՆ

Վագերաձին ձիերու նման սմբակ ունեցող կենդանի մըն է: Անոր մարմինը պատուած է սեւ եւ ճերմակ շերտերով, որոնց թիւը կը հասնի հարիւրի: Իւրաքանչիւր ոտքի վրայ կան մօտաւորապէս 15 սեւ գիծեր, կոնակին վրայ՝ մօտաւորապէս 20 սեւ գիծեր եւ նոյնքան ալ գլխուն եւ վիզին վրայ: Այս գիծերը կ'օգնեն վագերաձին պաշտպանուելու զինք որսալ ուզող կենդանիներէն. այսպէս՝ երբ խումբ մը վագերաձիեր կը վազեն գլխու պտոյտ կը յառաջացնեն առիւծներուն մօտ: Նոյն այս գիծերը կը պաշտպանեն վագերաձին ցէցէ ճանճի խայթոցէն, որովհետեւ այս թունաւոր ճանճի տեսակը կը սիրէ խայթել միագոյն մորթեր: Վագերաձին բուսակեր կենդանի է եւ շատ արագ կը վազէ:



Ո՛Վ Կ՛ՈՒՋԷ ԸԼԼԱԼ ԲԱԶՄԱԳԷՏ

Սեպտեմբեր ամսուան հարցումներու պատասխաններուն ժամկետն է 15 հոկտեմբեր 2023: Հետեւաբար սիրելիներ, արձանագրեցէք զանոնք թուղթի մը վրայ, նշելով ձեր անունն ու ձեր յաճախած դպրոցի անունը: Յետոյ ուղարկեցէք այդ թուղթը Հորիզոնի խմբագրատուն՝

3401 Oliver Asselin
Montreal, Canada
H4J 1L5

1.- Հայաստանի երկրորդ անկախութիւնը տեղի ունեցաւ.

- Ա.- 28 Մայիս 1918-ին:
- Բ.- 21 Սեպտեմբեր 1991-ին:
- Գ.- 27 Սեպտեմբեր 2020-ին:

2.- Արցախի 44-օրեայ պատերազմը սկսաւ.

- Ա.- 28 Մայիս 1918-ին:
- Բ.- 21 Սեպտեմբեր 1991-ին:
- Գ.- 27 Սեպտեմբեր 2020-ին:

3.- Արցախի 44-օրեայ պատերազմը ավարտեցաւ.

- Ա.- 9 Նոյեմբեր 2020-ին
- Բ.- 21 Սեպտեմբեր 1991-ին:
- Գ.- 27 Սեպտեմբեր 2020-ին:

4.- Արցախի պատերազմին զոհուած Յարութ Բանոյեանին նուիրուած երգը երգած է.

- Ա.- Ներսիկ Իսախրեան
- Բ.- Գառնիկ Սարգիսեան
- Գ.- Արաբօ Իսախրեան

5.- Յարութ Բանոյեան մասնակցած է.

- Ա.- Շուշիի մարտերուն:
- Բ.- Երեւանի մարտերուն:
- Գ.- Անիի մարտերուն:

6.- Տաթևի վանքին անուանակոչումը կու գայ.

- Ա.- Տաթևի վանաւոր անունէն:
- Բ.- Ճարտարապետէն որ ըսաւ. «Հոգին Սուրբ տայ թեւ»:
- Գ.- Շինարարէն, որ ըսաւ. «Այս վանքը պիտի կոչուի Տաթև»:

7.- Տաթևի գաւազանը կը խորհրդանշէ.

- Ա.- Թշնամիին անյաղթելի ըլլալը:
- Բ.- Չարերու պատիժը:
- Գ.- Հայ ժողովուրդին աննկուն կամքը:

8.- Ինչ կը նշանակէ խաչվերաց:

- Ա.- Խաչվերաց կը նշանակէ խաչ կախել:
- Բ.- Խաչվերաց կը նշանակէ խաչը պահել:
- Գ.- Խաչվերաց կը նշանակէ խաչը վեր բարձրացնել:

9.- Ջուրը մեր մարմնին օգտակար է, որովհետեւ

- Ա.- Մարմինը կը մաքրէ ատելորդ նիւթերէ:
- Բ.- Համ կու տայ ճաշին:
- Գ.- Իրարու վրայ կրնանք սրսկել:

10.- Ինչո՞ւ ցէցէ ճանճ մը չի կրնար խայթել վագերաձի մը:

- Ա.- Որովհետեւ ցէցէ ճանճը կը սիրէ խայթել միագոյն մորթեր:
- Բ.- Որովհետեւ ցէցէ ճանճը բարի միջատ մըն է:
- Գ.- Որովհետեւ ցէցէ ճանճին գլուխը կը դառնայ:



Մանկապատանեկան Հորիզոնը կը հովանաւորեն ՀՕՄ-ի Գանատայի Շրջանային վարչութիւնը եւ Գանատայի շրջանի իր 10 մասնաճիւղերը

Հերածայն (514) 332-3757
Email: sylvia@horizonweekly.ca
Խմբագրութիւն՝ Անահիտ Պալեանի
Թիւր պատրաստեց Սոնա Թիթիզեան
Ձեւադրացք՝ Լորի Խաչերեանի